

ՀՊՏՀ-ՈՒՄ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԹԵՍՏԵՐՈՒՄ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՌՈՒՋԱՆՆԱ ԽՈՍՏԻԿԵԱՆ

Հայտնի է, որ ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, գիտության, մշակույթի և ավանդույթների զարգացման հիմքում ընկած է երիտասարդ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը: ՀՀ անցումային ժամանակաշրջանի արդի փուլում բարձրագույն կրթության առջև ծառացած խնդիրներն էլ ավելի են բարդանում ֆինանսատնտեսական ճգնաժամի, սոցիալական պայմանների և մարդկանց ճնշող կարիքների պատճառով:

Գաղտնիք չէ, որ Հայաստանի Հանրապետությունը ժառանգեց խորքողային ողջ կրթական համակարգը՝ իր առավելություններով ու թերություններով: Կենտրոնացված դեկալարումը, կառավարման վարչարարության և իշխանավարության մեթոդները, ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների համար միասնականացված ծրագրերը շրջանցում էին ազգային առանձնահատկությունները, ավանդույթները և մշակույթը, իսկ ուսանողների ցանկություններն անտեսվում էին, քանի որ նրանք չունեին կրթության այլընտրանքային հնարավորություններ:

Հայաստանի միջազգային զարգացումներին համաքայլ և հավատարիմ գլոբալացման սկզբունքներին՝ կառուցվածքային փոփոխությունների և կրթական բարեփոխումների անհրաժեշտություն առաջացավ:

Հայաստանը, միանալով Բոլոնյան հռչակագրին, ճանաչեց կրթության համագործակցության կարևորությունը՝ նպատակ ունենալով զարգացնելու և հզորացնելու կայուն ու դեմոկրատական հասարակություն:

Կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը արմատապես փոխեց կարծրատիպային ծրագրերը, դասավանդման և ստուգման մեթոդները և նոր որակական շունչ հաղորդեց ուսումնամեթոդական գործընթացին:

Անշուշտ, դժվար է չհամաձայնել, որ կատարյալ ոչինչ չի լինում, և կրեդիտային համակարգի նույնիսկ մի քանի տարիների փորձը տալիս է դրական արդյունքներ: Արդյոք կարո՞ղ էր մեր ավանդական կրթությունը իր վարչափրամայական և ուսուցչամետ մթնոլորտով նպատալի ու անկաշկանդ պայմաններ ստեղծել՝ ուսանողին ուղղորդելով ազատ ինտերակտիվ հաղորդակցման, ապահովելով լայն մտահորիզոն և գիտելիքների հաստատուն բազա:

Կարելի է շարունակաբար խոսել խորհրդային կրթության բացթողմների մասին, սակայն մեր նպատակը ոչ թե վերջիններիս բացահայտումն է, այլ կրեդիտային համակարգը թերություններից հնարավորինս զերծ պահելը, որոնք պայմանավորված են կարճաժամկետ փորձով և այլ սուբյեկտիվ գործոններով (լսարանում միանձնյա հսկողության պարագայում ծածկագրերի օգտագործում և տարածում, որոշ ուսանողների, նաև դասախոս-

ների դժվար, դժկամ հարմարվողականություն նոր կրթահամակարգին):

Վերոնշյալ պայմաններում օտար լեզուների դասավանդումը պահանջում է նոր ուղիների որոնում նյութերի ընտրության, դասաժամի անցկացման և ստուգման ձևերի միջև:

Թեստերի վաղ կիրառման շրջանում մեզանում կազմվում էին առավելագույնս պարզեցված առաջադրանքներ, իսկ փուլից փուլ անցումը խիստ տարբերակված բնույթ չէր կրում: Կցանկանալինք նշել, որ անգլերենի դասավանդումը բակալավրիատում պայմանականորեն բաժանվում է 3 փուլի: Առաջինը հնարավորություն է ընձեռում ծանոթացնելու ուսանողին ամենապարզ, տարրական, բայց տնտեսագիտության և բիզնեսի կարևորագույն հասկացություններին և գաղափարներին նվազագույն բառապաշարով, որին հաջորդում է երկրորդ փուլը՝ ընդհանուր տնտեսագիտության դասավանդումը համապատասխան ծրագրերով և նյութերով: Երրորդն ընդգրկում է նեղ մասնագիտական անգլերենի ուսուցում, սակայն, ներկայումս, ժամերի սակավության պայմաններում, այս գործընթացը հնարավոր է դառնում միայն մագիստրատուրայում սովորող ուսանողների համար:

Կարծում ենք՝ անհերքելի է այն փաստը, որ մասնագիտական յուրաքանչյուր նյութի հենքը համապատասխան գիտաբառերի ճիշտ ու հստակ ըմբռնումն է, քանի որ դրանց բազմիմաստությունը կարող է սխալի պատճառ դառնալ՝ տնտեսագիտության զանազան ոլորտներում գործածվելով:

Փորձենք մի քանի օրինակով հաստատել վերոնշյալը՝ հենվելով վերջերս մեր կազմած «Ապահովագրության գործ և ռիսկերի կառավարում»¹ անգլերեն ձեռնարկի նյութերի վրա, ինչպես և հիմք ընդունելով տնտեսագիտության այլ ոլորտներում ավելի վաղ կատարված ուսումնասիրությունները: Այսպես օրինակ՝ «**benefit**» բառի լայնիմաստ նշանակությունը՝ «**օգուտ, շահ**», կարծես, քիչ է առնչվում աշխատանքի տնտեսագիտության, աշխատանքի իրավունքի կամ ապահովագրության մասնագիտություններում հանդիպող «**նպաստ**» իմաստի հետ. օրինակ՝ «**գործազրկության նպաստ - unemployment benefit, հիվանդության նպաստ - sickness benefit, լրավճարումներ - fringe benefits**», «**policy**» բառը իր լայնիմաստ «**քաղաքականություն, գործելակերպ**» նշանակությամբ չի առնչվում ապահովագրության «**insurance policy**» գիտաբառի հետ, որը ո՛չ քաղաքականություն է, ո՛չ ապահովագրության գործելակերպ, այլ՝ ապահովագիր կամ ապահովագրության վկայական, որը ներառում է ապահովագրության գործարքի բոլոր մանրամասնությունների ու պայմանների վերաբերյալ տեղեկությո՜ւն: Այժմ դիտարկենք ապահովագրության և շուկայավարության մասնագիտություններում հանդիպող «**premium**» գիտաբառը՝ նկատի ունենալով դրա լայն իմաստը՝ «**պարգևատրում, հավելավճար**»: Առաջին դեպքում «**premium**»-ը գումար է, որը սահմանում է ապահովագրության ընկերությունը՝ իր հաճախորդին պաշտպանություն տրամադրելու դիմաց: Շուկայավարության մասնագիտությունում նույն գիտաբառը նշանակում է «**պարգև (պրեմիա), հաճախ՝ անվճար իր**», որը ընկերությունը տալիս է սպառողին՝ վաճառքը խրախուսելու նպատակով: «**Endowment**» բառի

¹ Նախապատրաստվում է հրատարակության:

իմաստն է «**նվեր, նվիրաբերություն**», սակայն «**endowment insurance**»-ը «**ավանդային (կուտակային) ապահովագրություն**» է և ունի երկակի իմաստ՝ տալիս է կյանքի ապահովագրության երաշխիք և համարվում է կապիտալ ներդրումների գերազանց միջոց: Ավանդը հաստատելու համար կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, սակայն, կարծում ենք՝ այսքանն էլ բավարար է՝ խոսելու տնտեսագիտության տարբեր ոլորտներում հանդիպող միևնույն գիտաբառերի տարբեր իմաստների իմացության ու հստակ տարբերակման կարևորության մասին:

Այսպիսով, կարելի է վստահաբար ասել, որ գիտելիքի՝ թեստերի կամ վարժությունների միջոցով գնահատման հիմքում գիտաբառի ճիշտ ու համապատասխան կիրառման գործոնն է:

Թեստերի մշակման սկզբնական փուլում, համաձայն «**դյուրինից՝ բարդ**» սկզբունքի, մենք առաջարկում էինք գիտաբառը սահմանմանը համապատասխանեցնելու առաջադրանքի օգտագործում, որը հաղթահարվում էր՝ շնորհիվ ուսանողի տնտեսագիտական ընդհանուր գիտելիքների ու տրամաբանական հմտությունների: Մեջբերենք մի քանի օրինակ՝ ցույց տալու, թե ինչպես կարելի է հեշտությամբ կռահել գիտաբառի սահմանումը՝ առանց նեղ մասնագիտական գիտելիքների: Այսպես՝ «**A share of a profit paid to people who own a company**», կամ «**putting money into business for extra profit**»:

Երկրորդ, առավել ևս երրորդ փուլում, մասնագիտական գիտելիքները շատ անհրաժեշտ են դառնում թեստային առաջադրանքները կատարելու համար: Այսպես օրինակ՝ «**the person who bought insurance protection**», «**the amount of money charged by insurance company for protection**», «**appliances, furniture, clothing that are not part of a building**»: Ուսանողները կոժվարանան գտնել սրանց համապատասխանող ճիշտ գիտաբառ՝ առանց մասնագիտական գիտելիքների: Այնուհետև փորձում ենք առաջնորդվել հետևյալ սկզբունքով. առաջարկվում է տեքստից դուրս գրել առաջադրված սահմանմանը համապատասխանող գիտաբառերը, ինչը և նյութի լուրջ ուսումնասիրություն է պահանջում: Մագիստրատուրայում սովորողների համար գիտաբառ-սահմանում առաջադրանքը ենթադրում է միայն գիտաբառի հիշատակում՝ օգտագործելով արդեն առկա լեզվական ու մասնագիտական գիտելիքների շտեմարանը:

Թեստերում մշակված հաջորդ առաջադրանքը նախատեսում է նախադասության ճիշտ ձևակերպում ու մտքերի շարադրում: Սկզբնական շրջանում առաջադրանքի կատարումը պահանջում էր սխալ բովանդակությամբ նախադասությունների տարբերակում կամ ճիշտ նախադասությունների մատնանշում: Հետագայում սխալ նախադասությունների տարբերակումը վերածվեց սխալ նախադասությունները շտկելու պահանջի: Վերոնշյալ առաջադրանքը կառուցված է երկրորդ՝ հետևողականության սկզբունքի վրա, համաձայն որի՝ գիտաբառի մեկնաբանումից անցում է կատարվում հասկացություն-հայեցակարգերի լուսաբանմանը:

Թեստերում և վարժություններում կատարվող ընթացիկ բարեփոխումները միտված են ուսանողների գիտելիքների քանակական ու որակական առաջընթացի ապահովմանը:

Անդրադառնալով ուսանողների կողմից հայեցակարգերի ճիշտ ընկալմանը՝ հարկ է խոսել նաև ոչ պակաս կարևոր՝ ուսանողի բառապաշարի մշտական հարստացման խնդրի մասին: Ժամանակատար և աշխատատար լինելով՝ դա պահանջում է նախ՝ անգլերեն տնտեսագիտական նյութի ապահովման հնարավորություն, ինչն ուղղակիորեն պայմանավորված է տրամադրվող ժամերի քանակով և բառապաշարի հարստացման համար նախատեսված վարժությունների քանակի ու տեսակի ավելացմամբ՝ պարտադիր կատարման պայմանով: Դրանց թվում են բառափոխման վարժությունները, որոնք հնարավորություն են ընձեռում ուսանողին մտապահելու փոխարինվող բառերը՝ հետագայում ճիշտ կիրառման նպատակով, մերձավոր և հակառակ իմաստ ունեցող բառերի դասավորման կամ աղյուսակավորման վարժությունները:

Նշենք, որ բառափոխման վարժությունները աշխույժ հետաքրքրություն են առաջացնում ուսանողների շրջանում, մղում նրանց գտնելու բառափոխումների նորանոր ձևեր և հնարավորություններ: Դա նպաստում է ուսանողների՝ բառապաշարի խորքային յուրացմանը:

Թեստային առաջադրանքի հաջորդ տեսակը վերաբերում է թարգմանական հմտություններ զարգացնող վարժություններին: Դրանք արժեքավոր են, քանի որ միաժամանակ զարգացնում են փոխադրություններ կատարելու հմտությունները: Թարգմանական առաջադրանքները սովորաբար ունեն երկկողմանի ուղղվածություն. սկզբում՝ անգլերենից հայերեն, հետագայում՝ հայերենից անգլերեն:

Ուզում ենք ավելացնել նաև, որ առաջադրանքի յուրաքանչյուր տեսակ պետք է ունենա մշտական և համալիր կիրառություն, ինչը ժամանակի ընթացքում հնարավորություն կտա իրագործելու օտար լեզվի դասավանդման բազմաշերտ և հեռահար նպատակները՝ մասնագիտական անգլերենով ազատ բանավոր հաղորդակցման և նույնչափ կարևոր՝ գրավոր հմտությունների զարգացում:

РУЗАННА ХОСТИКЯН - Некоторые проблемы, связанные с инновационной разработкой тестов по английскому языку в АГЭУ.- Данная статья включает анализ и предложения в связи с некоторыми видами тестовых заданий, направленных на усвоение знаний экономического английского по специальности, а также виды упражнений по обогащению словарного запаса студентов с целью развития свободной, устно-коммуникативной и письменной речи в условиях развивающейся экономики и широкого внедрения кредитной системы обучения.

RUZANNA KHOSTIKYAN - About Some Problems of Innovative Development of English Tests in ASUE.- The article considered includes analysis and suggestions made for some major kinds of tests designed for acquisition of narrowly specialized terms and general economic concepts as well as exercises aimed to enrich and enlarge the student's wordstock and use it in oral communicative and written speech in conditions of developing economy and wide introduction of credit system of education.